ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 նոյեմբերի Շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

166
(2646)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 138

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանում դեռեւս շարունակում են գերության մեջ գտնվել ՀՀ քաղաքացիներ: Եվ սա այն դեպքում, երբ 2021 թ. հունիսին՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավի շրջանակներում, Նիկոլ Փաշինյանը, որն այն ժամանակ գլխավորում էր ՔՊ ցուցակը, հայտարարել էր. «Դուք նաեւ պետք է գիտակցեք, որ գերիների հարցը էսօր ուզում են մեր պետության եւ մեր ժողովրդի դեմ օգտագործել անհամաչափ զիջումներ պարտադրելու համար: Այո, այդ տղաները Բաքվի բանտերում պայքարում են Հայաստանի անկախության համար, Հայաստանի ինքնիշխանության համար, եւ այո, նրանք մեզ կներեն մի ամիս, երկու ամիս ավել գերության մեջ մնալու համար, բայց նրանք չեն ների, եթե մենք հանուն իրենց ազատության զիջենք մեր երկրի անկախությունը եւ ինքնիշխանությունը...»,- ասել էր Փաշինյանը: Սակայն իրականությունն այն է, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում Նիկոլ Փաշինյանի կողմից Ադրբեջանում պահվող գերիների թեմայի մասին խոսելուց եւ անգամ պատերազմից երկու տարի անց, Ադրբեջանում շարունակում են գերության մեջ մնալ ՀՀ քաղաքացիներ, իսկ սա նշանակում է, որ Նիկոլ Փաշինյանի այս խոսքերը պարզապես նախընտրական հնարք էին:

Ազգային ժողովի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանն իշխող քաղաքական թիմի ներսում «սեւ ագռավի» է վերածվել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առողջապահության նախկին նախարարը վաղո՛ւց չի շփվում թիմակիցների հետ ու, ասես, մերժված լինի բոլորի կողմից: «Նա այժմ ընդգծված մտերիմ է Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանի հետ: Ու դա պատահական չէ: Իսկ Տիգրանյանն իր հերթին Հակակառուցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ու վերջինիս եղբոր՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Դավիթ Խաչատրյանի հետ է մտերիմ: Հաշվի առնելով մտերմությունների այս շղթան ու միմյանց փոխկապակցված լինելու հանգամանքը՝ չի բացառվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեն Թորոսյանի ձկնաբուծարաններ ունենալու թեման այդքան էլ խոր չքննի»,- «Ժողովուրդ» օրաթերթին հուշեց իշխանամերձ աղբյուրներից մեկը: Նկատենք, որ Թորոսյանի ու ՔՊ-ականների հարաբերությունները էլ ավելի են լարվել կուսակցության՝ ավելի քան մեկ ամիս առաջ տեղի ունեցած վարչության նիստից ու արձանագրված խայտառակ ընտրակեղծիքներից հետո: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ականերին դուր չի եկել, որ Թորոսյանը հասկացել ու հանձն է առել մինչեւ վերջ բացահայտելու ընտրությունների հետ կապված խառնաշփոթը: Եվ այժմ հետաքրքիր է, թե սեփական թիմակիցների հետ ունեցած առճակատումը հօգուտ ո՞ւմ է ավարտվելու:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը անձամբ չի գնացել Քննչական կոմիտե՝ 44 օրյա պատերազմի առիթով հարուցված քրեական վարույթով հարցաքննության. ՀՀ քննչական կոմիտեի քննիչներն են գնացել Վարչապետի մոտ՝ նրան հարցաքննելու: «Ժողովուրդ» օրաթերթն իր այս տեղեկությունը փորձեց պարզել հենց Քննչական կոմիտեից, որտեղից ի պատասխան հաղորդեցին. «Հայտնում ենք, որ 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9 ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արցախի դեմ սանձազերծած ագրեսիվ պատերազմի ընթացքում Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնատար մի խումբ անձանց կողմից իրենց պաշտոնեական լիազորությունները չարաշահելու ենթադրյալ հանցագործության դեպքի առթիվ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված քրեական վարույթի նախաքննությունը 2022 թվականի մայիսի 4-ից շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի՝ զինվորական քննչական գլխավոր վարչության՝ հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում: Սույն քրեական վարույթի շրջանակներում Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը հարցաքննվել է վկայի դատավարական կարգավիճակով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված բոլոր պահանջների պահպանմամբ»: Նշենք, որ «Ազատության» հարցմանն ի պատասխան՝ Քննչական կոմիտեից հայտնել էին, որ կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության՝ հատկապես կարեւոր գործերի քննության վարչությունում վարչապետ Փաշինյանը որպես վկա է հարցաքննվել: Նկատենք, որ 2020թ. հունվարի 25-ին՝ Կապանում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ (այն ժամանակ, ի դեպ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը չէր խուսափում լրագրողների հետ ուղիղ շփումներից), մեծախոսում էր, թե ինքն այնքան հասանելի է, որ հատուկ քննչական ծառայությունից հրավեր է ստացել ու վեր է կացել, գնացել հարցաքննության: «Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ երկրի գործող ղեկավարը Քննչական կոմիտեի հրավերով ներկայացել է նախաքննության մարմնի գրասենյակ եւ քննիչի աշխատասենյակում հարցաքննվել: Ի դեպ, ինձ երեկ էլ հրավիրել են ՀՔԾ, եւ հարցաքննվել եմ նաեւ այնտեղ»,- ասում էր Փաշինյանը: Այսօր, սակայն, իր իսկ բառերով ասած՝ իրավիճակ է փոխվել, եւ արդեն քննիչներն են գնում վարչապետի մոտ՝ հարցաքննելու:



«Կալանք տվող» դատավորներից ոմանք պահեստային դատավորներ կլինեն. դատարանը փակելու հետքերով: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ այսպես ասած «կալանք տվող» դատավորներից ոմանց «տուն ուղարկելու» փոխարեն կպահեն որպես պահեստային դատավորներ: Դատական համակարգում ակտիվ շարունակվում է «կալանք տվող» դատարանի գործունեությունը դադարեցնելու գործընթացը, եւ դատական համակարգում նշել են, որ կան դատավորներ, որոնց կարելի է տուն չուղարկել, այլ պահել որպես պահեստային դատավորներ, որպեսզի եթե որեւէ գործով դատավոր փոխվի, պահեստային դատավորով փոխարինեն: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դատական համակարգը եւ իրավապահ համակարգը քննարկել են մինչդատական վարույթով դատարանի գործունեությունը եւ եկել այն համոզման, որ անհրաժեշտ է փակել վերջերս ձեւավորված դատարանը: Գուցե հետանցում լինի նախկին մոդելին, երբ դատարանները հերթապահություն էին իրականացնում, եւ օրվա հերթապահ դատավորն էր քննում օրվա ընթացքում ներկայացված կալանքի միջնորդությունները: ՀՀ երրորդ իշխանության հետ այս քննարկման պատճառը եղել է այն, որ իրավապահ համակարգը խայտառակ բացահայտում է արել Աջափնյակի դատարանի՝ «կալանք տվող» դատավորների գործունեության մասով՝ պարզելով, թե ինչ մեխանիզմներ են գործել, եւ ինչպես է որոշվել՝ ում կալանքը որ դատավորը քննի: Նկատենք, որ 1,5 տարի առաջ «կալանք տվող» դատավորների՝ տխրահռչակ Աջափնյակ-1 դատարանում աշխատելու համար ընտրվեցին մարդիկ, որոնք խնդիր չունեին ցանկացածին կալանք «ապահովելու» հարցում: «Կալանք տվող» դատավորները հաջողությամբ կատարում էին իրենց խնդիրը, եւ քաղաքական հնչեղություն ունեցող գործերը հիմնականում բաժին էին հասնում առավել պատրաստակամներին: Այս դատարանի ստեղծման համար ջանք ու եռանդ չխնայեց ԲԴԽ նախագահի պարտականությունները կատարող Գագիկ Ջհանգիրյանը:

ԳՆԱՃ

ԴՈԼԱՐԸ ԱՐԺԵԶՐԿՎԵԼ Է, ԴՐԱՄԸ՝ ԱՐԺԵՎՈՐՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, խորհրդարանի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Պապոյանը:

-Պարոն Պապոյան, այժմ դոլարը Հայաստանում արժեզրկվում է իսկ դրամն արժեւորվում է, բայց գնաճը գնալով ավելանում է, տնտեսագետների մի մասն այս իրավիճակը իհարկե բացատրում է Հայաստանում ապահովվող անդադար հոսքերով, բայց, ասում են, որ դրամի արժեւորման պայմաններում հնարավոր է գնաճը ինչ-որ ձեւով բալանսի բերել, Ձեր տեսակետը ո՞րն է:

-Վերջերս ես բավականին խոր վերլուծություն եմ կարդացել, որը կատարվել էր կենտրոնական բանկի վերլուծաբանների կողմից, եւ նրանք նշել էին, որ տարբեր սցենարների պարագայում՝ նվազագույն գնաճը Հայաստանում ոչ թե 9 կամ 9.5 տոկոս կլիներ, այլ 15 ու ավել տոկոս, ընդհուպ՝ էլ ավելի բարձր տոկոս, եթե տեղի չունենար 2 երեւույթ. կենտրոնական բանկը չթանկացներ փողը եւ, որ ավելի կարեւոր է այս պահին, դոլարը չարժեզրկվեր եւ դրամը չարժեվորվեր:Իրականում մենք գնաճ ունենք, բայց այդ գնաճը ինչ-որ տեղ զսպվում է այդ գործոնով: Օրինակ, եթե միջազգային շուկայի որեւէ ապրանքի գինը ավելացել է մի քանի տոկոսով ապա Հայաստանում դրա վրա 25 տոկոսով պետք է ազդեր, սակայն ազդել է 10 կամ 12 տոկոսով՝ ի հաշիվ դոլարի արժեզրկման եւ դրամի արժեվորման: Ես համաձայն եմ, որ կարող է օբյեկտիվ ակնկալիք լինել. օրինակ՝ 20 տոկոսով դոլարը կամ եվրոն արժեզրկվել են, ուրեմն ուղիղ նույն չափ՝ ապրանքների գները պետք է իջնեին: Դա տեղի չի ունեցել, քանի որ այդ ապրանքի գինը դրան զուգահեռ 30 տոկոսով ավելացել է:

-Իսկ ավելացման պատճառը ո՞րն է:

-Միջազգային շուկաներում տարբեր պատճառներով ապրանքների գներն ավելացել են: Օրինակ՝ քովիդի պատճառով, դրան հետեւած՝ տնտեսական զարգացումների պատճառով, ռուս-ուկրաինական պատերազմի....: Ըստ էության, պատերազմը ընթանում է այնտեղ, որտեղ հացի համաշխարհային շտեմարաններից մեկն է: Պատերազմի հետեւանքով այն ռումբերը, որոնք ընկնում եւ պայթում են, խաթարում են որոշ երկրներ հացի ներմուծումը, եւ այդ ներմուծման բացակայությունը նպաստում է պարենային գների բարձրացմանը շուկայում: Եթե ցորենի գինը նախատեսվում է բարձրացնել, ապա բնականաբար այն ազդում է նաեւ բրնձի գնի վրա, եւ այնպես չէ, որ տվյալ թանկացումը ազդելու է միայն ցորենի վրա: Շուկայում գոյություն ունի ապրանքների փոխշաղկապվածություն, եւ եթե թանկանում է մի ապրանք, ապա դա տարածվում է մյուս ապրանքների վրա այդ փոխկապակցվածության պատճառով: Համաշխարհային ֆենոմենը եւ դրա ապացույցը այն է, որ բոլոր պետությունների մեջ գնաճի ամենացածր դրսեւորումը Հայաստանում է: ԵԱՏՄ երկրներում ամենացածր գնաճն ունի Հայաստանը, եւ այն հավասար է արեւելյան եվրոպական երկրների մեծ մասի հետ, քանի որ մենք գնաճով ավելի շատ նման ենք արեւելյան երկրներին:

-Բայց այս գնաճներին զուգահեռ մեզ մոտ չեն բարձրանում մեր աշխատավարձերը:

-Հայաստանում 9 ամսվա կտրվածքով աշխատավարձերը ավելացել են, միջինը՝ մոտավորապես 12 տոկոսով, եթե չեմ սխալվում:

-Դուք նկատի ունեք եւ մասնավոր եւ պետական ոլորտներում:

-Մասնավոր ոլորտում՝ 16.2 տոկոս, ցավոք սրտի, պետական ոլորտում՝ 4.5 տոկոս: Այս բարձրացումը իմ կարծիքով պետք է տեղի ունենար: Մասնավորը, տեսնելով այս թանկացումներ,ը արդեն իսկ բարձրացրել էր իր աշխատողների աշխատավարձերը, եւ պետությունը, ցավոք սրտի, քիչ էր բարձրացրել պետական աշխատողի աշխատավարձը, սակայն պետք է էլ ավելի բարձրացնի: Իրականում բոլոր այս տեսակները մի կողմ, ընդհանուր բարձրացումը գնահատվել է 4.5 տոկոս: Ես, կներեք, չեմ ցանկանում համաձայնել Ձեր խոսքին, թե բարձրացում չկա աշխատավարձերի, քանի որ այն կա, եւ այն արտահայտված է թվերով եւ վճարված հարկերով: Դա փաստ է, եւ մարդիկ ներկայացնում են աշխատավարձեր եւ դրա դիմաց վճարած հարկեր: Եթե իրատեսորեն նայենք այս ամենին, ապա կտեսնենք, որ կան շատ ավելի չգրանցված աշխատողներ եւ չհարկվող աշխատողներ:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ «ՍՏԻ ՓՈՒՉԻԿԸ»

2020 թվականի մարտի 11-ին Այունիֆի մարզի Տաթև համայնքում սահմանադրական հանրաքվեի նախընտրական քարոզարշավի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադարձել էր երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի այն հայտարարությանը, որ Արցախն Ադրբեջանի մաս չի կարող լինել: Նիկոլ Փաշինյանը, ի թիվս այլ մեղադրանքների, ասել էր, որ Սարգսյանի իշխանությունը 42 մլն դոլարի զենք է ձեռք բերել, որը հնարավոր չէ կիրառել ռազմական գործողությունների ժամանակ:

ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի իշխանության օրոք 42 մլն դոլարի ձեռք բերված ենթադրյալ անպետք զինատեսակի քրեական գործի շրջանակներում կալանավորվել էր ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի՝ ռադիոէլեկտրոնային պայքարի զորքերի բաժնի նախկին պետ, 44-օրյա պատերազմի հանձնաժողովի անդամ Վահան Ավետիսյանը: Այս աղմկահարույց քրեական վարույթով նոր հանգամանք է ի հայտ եկել: Մեզ հետ զրույցում փաստաբան Սասուն Ռաֆաելյանը մանրամասներ հայտնեց:

Փաստացի՝ Նիկոլ Փաշինյանը մեղադրանքներ հնչեցրեց ՀՀ երրորդ նախագահի հասցեին, իսկ փորձաքննությունը միանգամայն այլ բան է ապացուցել: Նիկոլ Փաշինյանն իր այս խոսքով խախտել է անմեղության կանխավարկածը եւ կրկին անգամ առանց հիմնավորման մարդկանց մեղադրել է չարած արարքի մեջ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ԹՎԵՐԸ ԿԱՏԱՍՏՐՈՖԻԿ ԷԻՆ»

«Ջինված ուժերում բազային կրթությամբ սպայական կազմը համալրելու հետ կապված բավականին լուրջ խնդիրներ ունենք»-, ահազանգում է Ազգային ժողովի պաշտպանության ու անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Արմեն Խաչատրյանը:

«Տարիներ ի վեր, - ասում է, - սպայական կազմը համարժեք կրթություն ստացած սպաներով գրեթե չի համալրվել»: Ու դրա պատճառը, ըստ նրա, միայն պատերազմը չէր. ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու համար դիմողների քանակը սկսել է նվազել 2012-ից: 2016-ին այդ թիվն ահագնացող է եղել՝ ընդամենը 16 դիմորդ:

Այս տարի Խաչատրյանի ներկայացրածով՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ ավելի քան 60 կուրսանտ է ընդունվել, ու եթե ավարտեն ինստիտուտը, ապա անկախ հանգամանքից՝ որտեղ են բնակվում ու ծառայության նշանակված, կամ՝ որտեղ են հաշվառված, 4 տարի անց մայրաքաղաք Երեւանում բնակարան կստանան:

Խաչատրյանը վստահ է՝ արդեն ուժի մեջ մտած կարգավորումը տարեցտարի էլ ավելի կմեծացնի ռազմական ակադեմիա դիմելու գրավչությունը: Նրա փոխանցմամբ՝ այսպիսի ծրագիր անգամ Ռուսաստանի Դաշնությունում չկա:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2022թ. սեպտեմբերի 13-ից ՀՀ տարածքի նկատմամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ագրեսիայի հետեւանքով վիրավորում (վնասվածք) ստացած կամ հոգեկան առողջության խնդիր ձեռք բերած զինծառայողները 500.000 դրամ միանվագ աջակցություն կստանան. նախագիծը հավանության է արժանացել կառավարության նիստում:

Ըստ այդմ, աջակցությունը կտրվի ռազմական գործողությունների հետեւանքով վիրավորում ստացած այն անձանց, որոնք բուժհաստատություններում բժշկական օգնություն եւ սպասարկում են ստացել, չունեն հաշմանդամության խումբ կամ ունեն (կարող են ունենալ) հաշմանդամության երրորդ խումբ:

Ֆինանսական օգնությունը կտրամադրվի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) կողմից՝ շահառուի էլեկտրոնային դիմումի հիման վրա:

Միասնական սոցիալական ծառայության կայքէջում առաջիկայում կստեղծվի պատուհան, որի միջոցով շահառուները ծրագրին դիմելու հնարավորություն կունենան մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 15-ը:

ՀԱՓՇՏԱԿԵԼ ԵՆ ԱՐՁԱՆԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Մկրտիչ Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ապօրինի, անհատույց գույքային շահ ստանալու դիտավորությամբ 2021 թվականի մարտի 14-ին՝ ժամը 01:40-ից 02:50-ը ընկած ժամանակահատվածում, Երեւան քաղաքի 2800 ամյակին նվիրված միջոցառմանը ինքնությունները չպարզված անձանց հետ այգուց հափշտակել է Երեւանի քաղաքապետարանին պատկանող 2.383.500 ՀՀ դրամ արժողությամբ «Նավակ Լողացնող» փոքրիկ բրոնզե արձանը, նույն այգու հարակից շինհրապարակի պահեստարանից հափշտակել է «Հայր եւ Որդի Մանվելյաններ» ՍՊԸ-ին պատկանող շինարարական գործիքներ, ինչպես նաեւ՝ ապօրինի կերպով, քննությամբ չպարզված հանգամանքներում ձեռք է բերել եւ պահել ակոսափող հրազեն հանդիսացող ինքնաշեն եղանակով պատրաստված թմբուկավոր ատրճանակ եւ երկու՝ ռազմամթերք հանդիսացող կարաբիններից, հրացաններից եւ համապատասխան տրամաչափի ակոսափող այլ զենքերից կրակելու համար նախատեսված գործարանային արտադրության 5.6 մմ տրամաչափի օղակաձեւ բոցավառման սպորտային-որսորդական փամփուշտներ:

ԿՄՆԱ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մերժեց Արուսյակ Ալեքսանյանի պաշտպանների բողոքը, ինչը նշանակում է, որ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը կշարունակի մնալ կալանքի տակ: Նկատենք, որ օրերս նրա օգնականն ազատ արձակվեց:

Ինչպես հայտնի է հոտեմբերի 19-ին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Ռազմիկ Մարիկյանի նախագահությամբ, բավարարեց դատավոր Ալեքսանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին ԱԱԾ քննիչի միջնորդությունը:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 17-ին ԱԱԾ ծառայողները ներխուժել էին դատարանի շենք եւ ձերբակալել դատավոր Արուսյակ Ալեքսանյանին եւ փաստաբան Էրիկ Ալեքսանյանին:

ՀՀ գլխավոր դատախազը միջնորդություններ էր ներկայացրել ԲԴԽ՝ պահանջելով թույլատրել քրեական հետապնդում հարուցել եւ ազատությունից զրկել դատավոր Արուսյակ Ալեքսանյանին, որը ժամեր տեւած քննության արդյունքում բավարարվել է: Քրեական վարույթը վերաբերում է քրեական հեղինակությունն առնչվող գործին: Մասնավորապես՝ դատարանը որոշել է գրավի դիմաց ազատ արձակել «Ֆազ» մականունով հայտնի քրեական հեղինակություն համարվող Սերգեյ Գրիգորյանին՝ բավարարելով վերջինիս պաշտպան Էրիկ Ալեքսանյանի ներկայացրած միջնորդությունը եւ այժմ ԱԱԾ-ն դատավորին մեղադրում է ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու եւ պաշտոնեական լիազորություններն անցնելու մեջ: Նույն վարույթի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել նաեւ փաստաբան Էրիկ Ալեքսանյանին, որին ԱԱԾ-ն մեղադրում է դատավոր Ալեքսանյանին պաշտոնեական լիազորություններն անցնելու հարցում օժանդակելու մեջ:

ՊԱՀԱՆՋ

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐԸ՝ «ԱՐՏՈՆՅԱԼ ԽԱՎ»

Դոլարի փոխարժեքի նվազումը շարունակում է անհանգստացնել ծրագրավորողներին:



Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչներն ու ընկերություններն այս օրերին պետական տարբեր գերատեսչություններում հանդիպումներ են ունենում ու բարձրաձայնում՝ ամերիկյան դոլարի արժեզրկումը ֆինանսական լուրջ խնդիրներ է առաջացնում ոլորտում, ու ընկերությունները դժվարանում են աշխատակիցներին աշխատավարձ վճարել: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի միջազգային ընկերություններից մեկում ծրագրերի իրականացման ղեկավար է այժմ աշխատում նախկին պատգամավոր Գեւորգ Գորգիսյանը: Նա այն համոզմանն է, որ ինչպես կորոնավիրուսի ու լոքդաունի ժամանակ է պետությունն աջակցել մի շարք ընկերությունների, այնպես էլ այժմ պետք է քայլեր ձեռնարկի, քանի որ եթե ոլորտը տուժի ու կազմալուծվի, ապա այն հետագայում վերականգնելը շատ ավելի բարդ, գուցեեւ անհնար է լինելու: Իսկ առաջարկվող լուծումներն այս պահին երկուսն են, դրանցից մեկը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչների աշխատավարձից գանձվող եկամտահարկն ուղիղ կիսով չափ՝ 50 տոկոսով վերադարձնելն է: Ինչը, ըստ Գորգիսյանի, հարցի համար ոչ թիրախային ու անարդյունավետ լուծում է: Մյուս տարբերակը ենթադրում է, որ պետությունը կկոմպենսացնի տարադրամի փոխարժեքի տատանումները, այսինքն՝ ոլորտի ընկերությունների համար բոլորովին այլ փոխարժեք սահմանվի: Տեղեկատվական ոլորտի ընկերությունների համար բոլորովին այլ՝ տարբերվող արտարժույթ սահմանելն ըստ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Պապոյանի՝ նշանակում է, որ այդ տարբերությունը Հայաստանի Հանրապետության մյուս քաղաքացիներն ու հարկատուներն են վճարելու. օրինակ՝ 100 հազար դրամ աշխատավարձ ստացող ուսուցիչն ու 90 հազար դրամ ստացող դաստիարակը: Տնտեսագետ Կառլեն Խաչատրյանը IT ոլորտի համար հատուկ փոխարժեք սահմանելու մեջ սոցիալական անարդարության էլեմենտներ է նկատում: Համեմատության համար նշում է՝ անդադար նկատվող գնահճի պայմաններում թոշակառուների կենսաթոշակն ընդամենը 3000 դրամով է ավելանում, բայց մինչեւ 1 մլն դրամ աշխատավարձ ստացող անձանց պետությունը պատրաստվում է մինչեւ 100 հազար դրամի աջակցություն տրամադրել:

Պետությունը ոլորտի ընկերություններին իսկապես ցանկանում է աջակցել, այդ իսկ պատճառով էկոնոմիկայի նախարարությունն աշխատավարձի նախորդ չորս ամիսների եկամտահարկի 50 տոկոսը վերադարձնելու օրինագիծ է շրջանառել այժմ: Եվ եթե այն խորհրդարան հասնի ու պատգամավորների հավանությանն արժանանա, ապա ոլորտի ներկայացուցիչների մեծամասնությունը կրկնակի կշահի: Բանն այն է, որ ծրագրավորողների մեծամասնությունն արդեն իսկ օգտվում է պետության կողմից սահմանած եկամտային հարկի վերադարձով՝ հիփոթեքով բնակարան ձեռք բերելու ծրագրից, ու, փաստորեն, պետությունն այդ մարդկանց հիփոթեքային վարկի ոչ միայն տոկոսադրույքն է մարելու, այլ նաեւ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ու դեկտեմբեր ամիսների եկամտահարկի կեսի չափով գումար է տրամադրելու:

Բարձր տեխնոլոգիաների նախարարությունից մեզ հայտնեցին, որ ոլորտին աջակցելու համար Հայաստանի կառավարությունը դեռեւս 2014-ից աջակցող ու ձեռք մեկնող տարբեր ծրարգեր է իրականացնում: Դրանցից մեկն, օրինակ, նախարարության կողմից հավաստագիր ստացող ընկերությունների համար եկամտահարկի ընդամենը 10 տոկոս սահմանելն է: Աջակցող մեկ այլ ծրագրով էլ՝ պետության կողմից հավաստագիր ստացած IT ընկերություններն, ի տարբերություն այլ կազմկերպությունների, շահութահարկ չեն վճարում: Այս տարի էլ բարձր տեխնոլոգիաների նախարարությունը քեշբեքի ծրագիրն է թողարկել, ինչը ենթադրում է ծրագրավորմամբ զբաղվող նորաբաց ընկերության աշխատակիցներից եկամտահարկի ընդամենը 50 տոկոսը գանձել: Ծրագիրը կյանքի կոչելու համար պետբյուջեից արդեն 7 մլրդ գումար է դուրս գրվել ու տրամադրվել ընկերություններին:

Եթե օրենսդրական այս նախաձեռնությունը կյանքի կոչվի, ապա այն կարող է սոցիալական բուռնտ հասունացնել դոլարով, եվրոյով, ռուբլիով աշխատավարձ ստացող մյուս ընկերությունների մոտ: Մի կողմ դնելով՝ հարցի իրավական կամ տնտեսական կողմը. զուտ միայն բարոյական հարթակում ոլորտի ներկայացուցիչների պահանջն արդարացի է: IT ոլորտի ներկայացուցիչները մեր հասարակության ամենից լավ վարձրատրվող անհատներն են, իսկ անհատ ծրագրավորողների մեծամասնությունը դրսի ընկերությունների հետ է աշխատում, առձեռն գումար ստանում, եւ, բնականաբար, տարիներ ի վեր չգրանցված իր եկամտից պետությանը հարկ չի վճարում: Հետեւաբար այժմ պետությանը խստապահանջ պայմաններ թելադրելը, գոնե բարոյական տիրույթում, ճիշտ չէ: Իսկ եթե էկոնոմիկայի նախարարության շրջանառած՝ եկամտահարկի 50 տոկոսի վերադարձի ծրագիրը կյանքի կոչվի, ապա դա ոչ այլ ինչ, քան ծրագրավորողներին արտոնյալ խավի ներկայացուցիչ համարել կլինի:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՓԵԼՈՍԻՆ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է

Դեմոկրատ կոնգրեսական Նենսի Փելոսին նոյեմբերի 17-ին որոշել է հեռանալ Ներկայացուցիչների պալատում դեմոկրատների առաջնորդի պաշտոնից եւ չի ձգտի վերընտրվել՝ երիտասարդների համար ճանապարհ բացելու համար: CNN-ի փոխանցմամբ՝ նա այս մասին հայտարարել է հինգշաբթի եւ հավելել, որ կմնա պալատի սովորական անդամ: Փելոսին այժմ 82 տարեկան է:

Նա նման որոշում է կայացրել այն բանից հետո, երբ դեմոկրատները Կոնգրեսի միջանկյալ ընտրություններից հետո կորցրել են մեծամասնությունը Ներկայացուցիչների պալատում, եւ ինքն էլ կորցրել է խոսնակի պաշտոնի իրավունքը: Փոխարենը հանրապետականների կողմից այս պաշտոնում կառաջադրվի Քեւին Մաքքարթին:

Փելոսին Դեմոկրատական կուսակցության առաջնորդն է 2003 թվականից: Նա առաջին եւ մինչ այժմ միակ կինն է, ով զբաղեցրել է Ներկայացուցիչների պալատի նախագահի պաշտոնը: Նա եղել է խոսնակ 2007 թվականի հունվարից մինչեւ 2011 թվականի հունվարը, այնուհետեւ 2019 թվականի հունվարից՝ մինչ այժմ:

ԿԺԱՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հաջորդ շաբաթ ծրագրում է այցելել Հայաստան՝ ՀԱՊԿ գագաթնաժողովին մասնակցելու, հայտարարել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

Ավելի վաղ տեղեկացրել էինք՝ նոյեմբերի 23-ին ՀՀ վարչապետի նախագահությամբ Երեւանում տեղի կունենա ՀԱՊԿ խորհրդի նիստ:

Միջոցառմանը, ինչպես սպասվում է, կմասնակցեն Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Բելառուսի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Ղազախստանի Հանրապետության նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը, Ղրղզստանի Հանրապետության Նախագահ Սադիր Ժապարովը, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Տաջիկստանի Հանրապետության նախագահ Էմոմալի Ռահմոնը: Նիստին կմասնակցի ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասը:

Ինչպես տեղեկացնում են ՀԱՊԿ մամուլի ծառայությունից՝ կարեւորագույն հարցերից են լինելու ՀԱՊԿ ճգնաժամային արձագանքման համակարգի կատարելագործումը եւ Հայաստանի Հանրապետությանը օգնություն ցուցաբերելու համար համատեղ միջոցառումների քննարկումը:

ՇՈԿԻ ՄԵՋ ԵՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՀԱՐԱՁԱՏՆԵՐԸ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ ԵՆ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ հարցաքննվել են Պեմզաշենի ոճրագործության գործով կալանավորված Արկադի Բարսեղյանի ընտանիքի անդամները, որոնք իրավապահներին հայտնել են, որ շոկի մեջ են: Ավելին՝ Արկադի Բարսեղյանը պնդում է, որ ինքը կապ չունի դեպքի հետ եւ այդ օրը այլ վայրում է եղել:

Ի դեպ, մեզ հայտնի դարձավ, որ քրեական վարույթով հարցաքննվել են նաեւ Արկադի Բարսեղյանի ընկերները, որոնք իրավապահներին ասել են, թե իբր նա դեպքի օրը՝ այդ ժամին, եղել է իրենց հետ: Նկատենք, ոստիկանությունը հայտնել էր, որ Վրույր Բարսեղյանը եւ Արկադի Բարսեղյանը Զարինե Մելիքսեթյանի տուն են գնացել Արկադի Բարսեղյանի մեքենայով, ավելին՝ Արկադի Բարսեղյանի տանը հայտնաբերվել են արնանման հետքեր:

Իսկ Արկադի Բարսեղյանը պնդում է, որ Վրույրը ստում է, եւ ինքը դեպքի հետ կապ չունի: Իսկ ինչու պետք է Վրույր Բարսեղյանը ցանկանար վատություն անել Արկադի Բարսեղյանին. ըստ մեզ հասած լուրերի՝ Արկադի Բարսեղյանը Վրույրին արգելել է իր տուն գնալ, ինչն էլ դարձել է թշնամության պատճառ:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 9-ին արտակարգ ու ողբերգական դեպք էր տեղի ունեցել Շիրակի մարզի Արթիկ խոշորացված համայնքի Պեմզաշեն գյուղի տներից մեկում: Տան բնակիչները չէին արձագանքել դռան թակոցներին, իրավապահների ներկայությամբ դուռը բացելուց հետո հատակին 3 դի էր հայտնաբերվել՝ տան բնակիչներ Զարինե Մելիքսեթյանը, նրա դուստր Կարինե Մելիքսեթյանը եւ նրա 8-ամյա որդին: Մի քանի օր շարունակ իրավապահները չէին կարողանում բացահայտել, թե ովքեր են ոճրագործները, որոնք դաժան կերպով սպանել էին տան անդամներին, սակայն նոյեմբերի 12-ին ենթադրյալ հանցագործություն կատարածները հայտնաբերվեցին եւ նրանցից մեկը՝ Վրույր Բարսեղյանը, խոստովանել է եղելությունը:

Հիշեցնենք, որ նախորեին ոստիկանությունը մանրամասներ է ներկայացրել Պեմզաշենում տեղի ունեցած ողբերգական դեպքից:

«2022 թվական: Նոյեմբերի 9: Աշխատանքային հերթական օր: Շիրակի մարզի Պեմզաշեն գյուղում բոլորն իրենց առօրյա աշխատանքով էին զբաղված, դպրոցում բնականոն դասապրոցես էր: Հետո պարզվեց, որ դպրոցի լավագույն երկու աշակերտները բացակա են, իսկ նրանց մայրը՝ Պեմզաշենի առողջության կենտրոնի աշխատակցուհի Զարինե Մելիքսեթյանը, աշխատանքի չէր եկել: Հանգամանքներ, որոնք կասկածելի թվացին թե՛ աշխատավայրում, թե՛ դպրոցում:

«Զառա Մելիքսեթյանը, լինելով պարտաճանաչ աշխատող, թեկուզ 10 րոպե ուշացման դեպքում միշտ տեղեկացնում էր: Ինձ համար իր ուշանալն արտառոց էր: 3-4 անգամ զանգեցի, չպատասխանեց, հետո հաշվապահի միջոցով զանգ տվեցի աղջկան: Աղջիկը եւս չպատասխանեց, նորից զանգեցի, չպատասխանեց: Բուժքրոջը կանչեցի, զանգեց նրա ամենամոտ հարեւանին»,-պատմում է Պեմզաշենի առողջության կենտրոնի տնօրեն Վարդուհի Խաչատրյանը:

«Երեխաներն առավոտյան չէին ներկայացել առաջին ժամին: Մեզ մոտ, որպես կանոն, առավոտյան աշակերտների հաշվառումից հետո դասղեկները տեղյակ են պահում, որ այս դասարանում այսքան բացակա ունենք: Ներկայացվեց նաեւ այդ երկու աշակերտների բացակայության մասին: Անհանգստացած փորձեցինք կապ հաստատել ծնողի հետ: Զանգերը մնացին անպատասխան»,-ասում է Պեմզաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Լյովա Նազարեթյանը:

«Ժամը 12-ի կողմերը հիվանդանոցից զանգեցին, ասացին՝ գործի չի եկել Զարինեն: Ես էլ գնացի տեսնեմ, թե որտեղ կլինի տանը, հարեւանի տանը կամ գուցե մեքենայով տեղ է գնացել: Դուռը, պատուհանները խփեցի, չբացեցին: Մյուս դուռը ցելոֆանով փակված էր, ճղեցի, դուռը բացվեց, կահույքը հրեցի ու ներս մտա: Ներս մտնելուն պես՝ տեսա, որ բոլորը մահացած էին…»,-պատմում է հարեւանուհին՝ Ռուզաննա Ադամյանը:

Քանի որ տան դուռը կողպված էր, հարեւանուհին ներս էր մտել ոչ թե հիմնական մուտքով, այլ մեկ այլ դռնով: Դիակները հայտնաբերելուց հետո՝ գյուղացիները «911» ծառայություն, շտապօգնություն եւ ոստիկանություն էին զանգել»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՇՈԿԻ ՄԵՋ ԵՆ

ԴԱՆԱԿԱՎՈՐԸ ՎՆԱՍԱԶԵՐԾՎԵՑ

Նոյեմբերի 15-ին Ավանի քրեական հետախույզները տեղեկություն էին ստացել, որ Խուդյակովի փողոցում գործող «Յուքոմ» գրասենյակ էր մտել մի տղամարդ՝ գործարք կատարելու: Երեկոյան՝ ժամը մոտավորապես յոթն էր, եւ գրասենյակի աշխատակիցները նրան հայտնեցին, որ արդեն փակվել են, չեն կարող քաղաքացուն սպասարկել: Կարճատեւ վեճից հետո տղամարդը դուրս էր եկել, ապա վերադառնալով՝ փորձել էր կոտրել գրասենյակի ապակիները, դանակով սպառնացել էր աշխատակիցներին, թույլ չէր տվել, որ գրասենյակից դուրս գան: Այսպիսի բռվանդակությամբ ահազանգ ստացան Ավանի ոստիկանները. ահազանգողը տեսարանին ականատես քաղաքացի էր:

Ավանի բաժանմունքի քրեական հետախույզներն արագ մեկնեցին դեպքի վայր, որտեղ արդեն դանակավորը վնասազերծվել էր. անցորդներից մեկը՝ քրեակատարողական ծառայության աշխատակից, նկատելով գրասենյակում տեղի ունեցող վեճը, մտել էր ներս եւ վնասազերծել տղամարդուն՝ խլելով դանակը:

Ժամը 19:35-ին հենց հանցագործության վայրում ձերբակալվեց եւ ոստիկանության Ավանի բաժանմունք տեղափոխվեց մայրաքաղաքի Երզնկյան փողոցի բնակիչ, 39-ամյա տղամարդը: Պարզվեց, որ նա հասցրել էր ցուցափեղկի վրայից հափշտակել բջջային երկու հեռախոս: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեց հանցագործության գործիք դանակը:

Կազմված արձանագրությունները ներկայացվել են Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին: Նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ավազակության հատկանիշներով:

ԳՈՂՈՆԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Նոյեմբերի 17-ին ոստիկանության Կումայրիի բաժնում օպերատիվ տեղեկություն էր ստացվել, որ Արմավիր քաղաքի մի բնակիչ նոյեմբերի 8-ին գողացել էր ՊԵԿ Հյուսիսային մաքսատան տարածքում կայանված «Հունդաի Սոնատա» ավտոմեքենայի լուսարձակը:

Ոստիկանությունից հայտնում են, որ Կումայրիի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ 42-ամյա տղամարդը հրավիրվել է բաժին, որտեղ հայտնել է, որ նշված գողությունն արել է ինքը: Գողոնը հայտնաբերվել է: 42-ամյա արմավիրցուն ուղարկել են Շիրակի մարզային քննչական վարչություն. վարչություն են ուղարկվել նաեւ դեպքի առթիվ կազմված փաստաթղթերը:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՆ ՏՈՒԺԱԾՆԵՐ

Նոյեմբերի 17-ին՝ ժամը 22:47-ին, Շիրակի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Ջրաձոր գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ, կան տուժածներ:

Պարզվել է, որ Ամասիա-Գյումրի ավտոճանապարհի 10-րդ կմ-ին «Opel Astra G» մակնիշի ավտոմեքենան (վարորդ՝Հ. Ս., ծնված 1988 թ.) դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից (մոտ 2 մ) եւ հայտնվել ձորակում: Մինչ փրկարարների՝ կանչի վայր հասնելը՝ ուղեւորներ Ա. Ս.-ն (ծնված 1991 թ.), Հ. Պ.-ն (ծնված 1956 թ.) եւ Ա. Պ.-ն (ծնված 1989 թ.) հոսպիտալացվել են Գյումրի քաղաքի ԲԿ, իսկ Ե. Ս.-ն (ծնված 2013 թ.), Ռ. Ս.-ն (ծնված 2015 թ.), Հ. Ս.-ն (ծնված 2019 թ.)՝ «Գյումրու մոր եւ մանկան ավստրիական հիվանդանոց», որտեղ բժիշկները նրանց առողջական վիճակը գնահատել են բավարար: Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան, փակել գազի բալոնի փականը եւ ավտոմեքենան դուրս բերել ճանապարհի երթեւեկելի հատված:

«ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»՝ ԴԱՏԱԽԱԶԻՆ

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի հրամանով՝ Արարատի մարզի դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ: Այս մասին տեղեկացնում են Գլխավոր դատախազությունից: Մասնավորապես՝դատախազը, N քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս ճիշտ չի գնահատել առերեւույթ հանցանք կատարած անձի արարքի քրեաիրավական որակման համար նշանակություն ունեցող փաստերը: Պարզվել է նաեւ, որ արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների վերաբերյալ դատողություններ կատարելիս դատախազը հանգել է սխալ հետեւության, որի արդյունքում, հանցանքի կատարումը վկայող փաստերի անտեսմամբ կայացրել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին անհիմն որոշում:Նշված որոշումը հետագայում վերացվել է վերադաս դատախազի կողմից:

ԿՐԱԿ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Նոյեմբերի 18-ին՝ ժամը 12:15-ին, Հացի գյուղի 43-ամյա բնակիչ Իգոր Աբրահամյանը ոստիկանության Մարտունու շրջանային բաժին է դիմել այն հարցով, որ Հացի գյուղի վարչական տարածքի «Կաղնուն տակ» կոչվող տեղամասում «Բելառուս» մակնիշի տրակտորով գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելիս հարակից ադրբեջանական մարտական դիրքից հրաձգային զինատեսակներից կրակ է արձակվել իր ուղղությամբ: Հրադադարի ռեժիմի խախտման պատճառով աշխատանքները դադարեցվել են: Վնասվել է տրակտորի անվաթեւը եւ անվասկավառակը: Քաղաքացիական անձանց շրջանում տուժածներ չկան: Ստուգմամբ զբաղվում է ոստիկանության Մարտունու շրջանային բաժինը: Նյութեր են նախապատրաստվում ռուսական խաղաղապահ զորակազմին ներկայացնելու համար:

● *Ըստ ոստիկանության տվյալներիի՝նոյեմբերի 17-ից 18-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 58 դեպք, որից 9-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

Նոյեմբերի 23-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւանի նստավայրում նշանակված է Բերդ համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Հովսեփյանի, Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հասմիկ Մելիքյանի եւ Ներքին Կարմիրաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար Լեւոն Առաքելյանի դատավարության առաջին նիստը: Դատավոր Ա. Մարտիրոսյանի նախագահությամբ տեղի կունենան նախնական դատալսումներ: Ս. Հովսեփյանը եւ Լ. Առաքելյանը ներկայումս գտնվում են կալանքի տակ, իսկ Հ. Մելիքյանը գրավով ազատ է արձակվել կալանքից: Ս. Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Բերդի համայնքապետի տեղակալ, 2022 թ. սեպտեմբերի 25-ին Բերդ համայնքում կայանալիք ՏԻՄ ընտրություններին սատարելով «Ջորավոր համայնք» դաշինքին, Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մելիքյանի հետ օգտագործելով իրենց տրված իշխանական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունը, Ն. Կարմիրաղբյուրի մանկապարտեզի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Աստղիկ Առաքելյանի եւ Բերդ համայնքի ղեկավարի միջեւ 2018թ. հունվարի 17-ին կնքված թիվ 02 աշխատանքային պայմանագիրը լուծելու եւ պայմանագրի ժամկետը դադարեցնելու սպառնալիքով, 2022թ. օգոստոսի 22-ին Ս. Հովսեփյանի կողմից Ա. Առաքելյանին ծանուցում է ուղարկվել:

Ա. Առաքելյանի կողմից մերժում ստանալուց հետո 2022 թ, օգոստոսի 22-ին Ս. Հովսեփյանի կողմից Ա. Առաքելյանին ծանուցում է ուղարկվել՝նշելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 123-րդ հոդվածով նախատեսված կարգով Բերդի համայնքապետարանի աշխատակազմի եւ նրա միջեւ կնքված հիշյալ պայմանագրի գործողությունը 2022թ. սեպտեմբերի 5-ին դադարեցնելու մասին: Լ. Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Բերդ համայնքի Ն. Կարմիրաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար, 2022 թ, սեպտեմբերի 25-ին Բերդ համայնքում կայանալիք ՏԻՄ ընտրություններին սատարելով «Ջորավոր համայնք» դաշինքին, խորհուրդներ եւ ցուցումներ տալու եղանակով օժանդակել է Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մելիքյանին եւ համայնքապետի տեղակալ Ս. Հովսեփյանին՝ իրենց տրված իշխանական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունը օգտագործելուն, ինչի արդյունքում 2022 թ. օգոստոսին Ա. Առաքելյանին հարկադրել են ընդգրկվել նշված դաշինքում եւ նույն դաշինքի օգտին կատարել քարոզչություն՝ այդ կերպ վերջինիս հարկադրելով հրաժարվել իր նախընտրած կուսակցության օգտին նախընտրական քարոզչություն կատարելուց: Ս. Հովսեփյանին եւ Հ. Մելիքյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 211 հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 5-րդ կետերով, Լ. Առաքելյանին՝ 46-211 հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 5-րդ կետերով

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ԴԵՊՔ

ՆԱԽԱՁԵՌՆՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում նախաձեռնված և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննվող քրեական վարույթով բացահայտվել է տնտեսական հանցագործության նոր դեպք:

Մասնավորապես՝ Ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչություն օպերատիվ տվյալներ էին ստացվել այն մասին, որ տեղեկատվական տեխնոլոգիաների եւ համակարգչային տեխնիկայի բնագավառում գործունեություն իրականացնող ՍՊ ընկերությունների պատասխանատու անձինք, հարկեր չվճարելու նպատակով, ընկերություններում որպես աշխատողներ են գրանցում միայն աշխատակիցների մի մասին եւ հարկային հաշվարկներում վարձու աշխատողներին վճարված աշխատավարձերը ցածր են հայտարարագրում:

Ստացված տվյալներն իրացնելու նպատակով ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչության աշխատակիցների կողմից մշակվել եւ ձեռնարկվել են լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Պարզվել է, որ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնում հաշվառված, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ համակարգչային տեխնիկայի բնագավառում գործունեություն իրականացնող 3 ՍՊ ընկերության փաստացի սեփականատերերը, նախնական համաձայնության գալով, նշված ընկերությունների աշխատանքները համակարգող աշխատակիցների հետ, 2022 թվականի հունիսից մինչեւ սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում, օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գրավոր չեն ձեւակերպել մի քանի տասնյակ վարձու աշխատողների: Նույն ժամանակահատվածում, ՊԵԿ ներկայացված օրենքով սահմանված հաշվարկներում, հաշվարկված եւ վճարված աշխատավարձերը եւս չեն հայտարարագրվել: Հարկերը պակաս վճարելու նպատակով բացի աշխատակիցներին չգրանցելուց՝ ընկերությունների պատասխանատու անձինք հարկային մարմին ներկայացրած եկամտային հարկի եւ սոցիալական վճարի ամսական հաշվարկներում էականորեն ցածր են հայտարարագրել նաեւ գրանցված վարձու աշխատողների աշխատավարձերը:

Ձեռք բերված տեղեկությունների հիման վրա կատարված հարկային պարտավորությունների հաշվարկի համաձայն՝ պետական բյուջե չեն վճարվել առանձնապես խոշոր չափերով հարկեր:

Դեպքի առթիվ Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախաձեռնվել է քրեական վարույթ, որը նախաքննություն կատարելու համար փոխանցվել է Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչություն: Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում դատարանի որոշումների հիման վրա՝ ԱԱԾ ծառայության Երեւանի քաղաքային վարչության եւ ՊԵԿ հետաքննության ու օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների մասնակցությամբ խուզարկություններ են կատարվել ընկերությունների գործունեության վայրերում:

Արդյունքում՝ արձանագրվել են օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված վարձու աշխատակիցներ, ինչպես նաեւ՝ հայտնաբերվել եւ առգրավվել են քրեական վարույթի համար էական նշանակության փաստաթղթեր եւ էլեկտրոնային կրիչներ, համակարգիչների հիշողության կոշտ սկավառակներ, շուրջ 580 համակարգիչ, 220 բջջային հեռախոս, 3 համակարգչային սերվեր: Քրեական վարույթով համակողմանի եւ պատշաճ քննություն ապահովելու համար ստուգվում են նաեւ ընկերությունների իրականացրած գործունեության, ներգրավված դրամական միջոցների օրինականությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ համակարգչային տեխնիկայի բնագավառի գործունեության անվան տակ ապօրինի գործունեությունը քողարկելու վարկածը:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումները եւ քննչական գործողությունները շարունակվում են, միջոցներ են ձեռնարկվում հանցագործության մեջ ներգրավված հնարավոր այլ անձանց շրջանակը պարզելու, պետությանը պատճառված վնասի վերջնական չափը հստակեցնելու եւ այն վերականգնելու ուղղությամբ:

ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐ

Գնահատման եւ թեստավորման կենտրոնը դեկտեմբերի 15-ից սկսում է 2022-2023 ուսարվա շրջանավարտների պետական ավարտական եւ 2023 թվականի բուհերի ընդունելության քննությունների առաջին փուլի հայտագրումը:

Այս մասին տեղեկացնում է ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունը

Ավարտական քննություններ

Պետական ավարտական քննություններին մասնակցելու համար շրջանավարտը մինչեւ դեկտեմբերի 10-ը գրավոր դիմում է իր ուսումնական հաստատության տնօրենին: Պետական ավարտական քննություններ հանձնողների ցուցակ-հայտերը տնօրենը պետք է ուղարկի Գնահատման եւ թեստավորման կենտրոնի info@atc.am էլեկտրոնային հասցեին՝ դեկտեմբերի 15-ից 30-ը:

Միասնական քննություններ

Միասնական քննությանը մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) առցանց եղանակով Գնահատման եւ թեստավորման կենտրոնի dimord.am կայքէջում պետք է լրացնի ընդունելության դիմում-հայտ՝ նշելով առավելագույնը երկու միասնական քննություն: Դիմում-հայտը լրացնելու համար 2022-2023 ուստարվա շրջանավարտը պետք է դիմի իր ուսումնական հաստատության տնօրենին:

Նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2022-2023 ուստարվա շրջանավարտները, հանրակրթական դպրոցների եւ ՄԿՈՒ հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտները, ինչպես նաեւ օտարերկրացիները, օտարերկրյա ուսումնական հաստատությունների՝ տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ ՀՀ քաղաքացիները դիմում են իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված ուսումնական հաստատության տնօրենին:

Պահանջվող փաստաթղթեր

Ընդունելության դիմում-հայտը լրացնելու համար անհրաժեշտ է՝

3ճ4 չափի լուսանկարի էլեկտրոնային տարբերակը,

անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը,

ՀՀ ֆինանսների նախարարությունում Գնահատման եւ թեստավորման կենտրոնի 900018003401 հաշվեհամարին յուրաքանչյուր քննության համար փոխանցված 4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ վճարի անդորրագիրը:

Միասնական քննությունների վճարից ազատվում են՝

պարտադիր ժամկետային ծառայությունից զորացրված անձինք,

1-ին եւ 2-րդ խմբերի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամները,

ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,

առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին համապատասխանաբար կցում են զինվորական գրքույկի պատճենը, հաշմանդամության տեղեկանքի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության եւ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրված տեղեկանքների պատճենները, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի պատճենները:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 3 ՃՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀՀ-ՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Նոյեմբերի 17-ին տեղի է ունեցել ԱՄՆ աջակցությամբ բարեկարգված «Զառ» ուսումնական կենտրոնի բացման արարողությունը:

Միջոցառմանը ներկա է գտնվել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Միջոցառմանը մասնակցել են նաեւ ԱՄՆ Եվրոպական հրամանատարության ռազմավարության, պլանավորման եւ քաղաքականության հարցերով տնօրեն գեներալ-մայոր Դանիել Լասիկան, պաշտոնատար այլ անձինք:

«Զառ» ուսումնական կենտրոնը ՀՀ ՊՆ խաղաղապահ բրիգադի հիմնական ուսումնական ստորաբաժանումն է, որտեղ իրականացվում են խաղաղապահ ուժերի վարժանքները, զորավարժությունները, անձնակազմի պատրաստության եւ խաղաղապահ առաքելությունների նախապատրաստական պլանների համապատասխան պարապմունքները, կազմակերպվում են զինծառայողների վերապատրաստման դասընթացները: Կենտրոնի գործունեության նպատակն է կատարելագործել խաղաղապահ ուժերի բրիգադի զինծառայողների, ՀՀ ԶՈՒ համազորային ստորաբաժանումների եւ գործընկեր պետությունների զինված ուժերի ներկայացուցիչների մարտական պատրաստության մակարդակը, ինչն էլ իր հերթին թույլ կտա հեռանկարում ամրապնդել գործակցությունը միջազգային խաղաղապահ ուսումնական կենտրոնների հետ, անդամակցել միջազգային խաղաղապահ կրթական հաստատություններին, նախապատրաստել միջազգային չափանիշներին համապատասխան հրահանգիչներ, պլանավորել եւ իրականացնել առավել լայնածավալ զորավարժություններ:

«Զառ» ուսումնական կենտրոնի վերակառուցման աշխատանքներն իրականացվել են մի քանի փուլով: Այսուհետ հայ խաղաղապահները հնարավորություն կունենան իրենց վարժանքները եւ առաքելությունների նախապատրաստությունն իրականացնել առավել բարելավված եւ ժամանակակից չափանիշներին համապատասխանող պայմաններում:

Միջոցառման մասնակիցները շրջել են վերակառուցված ուսումնական մասնաշենքերով, ծանոթացել կատարված աշխատանքներին, նյութատեխնիկական բազային, զինծառայողների ուսումնական գործընթացի կազմակերպման եւ մարտավարամասնագիտական պատրաստության միջոցառումների անցկացման համար ստեղծված պայմաններին, ինչպես նաեւ հետեւել են նոր մարտավարական արգելագոտու հաղթահարման ցուցադրական պարապմունքին:

ԾՐԱԳՐԵՐ

«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳԻ» ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«ՀՀ կառավարության նախաձեռնած սուբվենցիոն քաղաքականությունը պետության, տեղական ինքնակառավարման մարմինների եւ բիզնեսի փոխգործակցության լավագույն ձեւաչափերից մեկն է»:

Ռոման Խուդոլիյ. «ԳեոՊրոՄայնինգ» ընկերությունների խմբի նախագահ

«ԳեոՊրոՄայնինգ» ընկերությունների խմբի ֆինանսական մասնակցությունը ՀՀ կառավարության եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ սուբվենցիոն ծրագրերին համագործակցության շրջանակներում հասնում է 1 միլիարդ 700 միլիոն դրամի: Ծրագրերն իրականացվել են հանրապետության Սյունիքի, Գեղարքունիքի եւ Արարատի մարզերում, որտեղ գտնվում են «ԳեոՊրոՄայնինգի» ակտիվները:

ՀՀ կառավարության կողմից նախաձեռնվել են պետական սուբվենցիոն ծրագրեր՝ բոլոր շահագրգիռ կողմերին տարածաշրջանային զարգացմանն ուղղված ենթակառուցվածքային ծրագրերի իրականացմանը ներգրավելու նպատակով: Մասնավորապես՝ բոլոր ծրագրերը ֆինանսավորվում են երեք աղբյուրներից՝ պետական բյուջեից, համայնքային բյուջեներից եւ մասնավոր հատվածի դրամաշնորհներից: Ծրագրերի իրականացումն արդյունավետորեն ազդում է համայնքային ենթակառուցվածքների զարգացման վրա:

Այսպիսով՝ 2021-2022 թվականներին սուբվենցիոն ծրագրերի շրջանակում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» մասնակցությամբ Սյունիքի մարզում՝ Կապան եւ Քաջարան համայնքներում, իրականացվել են հետեւյալ ծրագրերը.

➢ խմելու ջրի մատակարարման համակարգի, ջրամբարների կառուցում եւ նորոգում

➢ գյուղերի եւ քաղաքների ոռոգման, ջրամատակարարման համակարգերի

վերակառուցում

➢ բազմաբնակարան բնակելի շենքերի ապաստարանների համար նախատեսված նկուղների եւ տանիքների վերանորոգում

➢ բնակելի շենքերի վերանորոգում եւ ջերմամեկուսացում, եւ դրանց ճակատային լուսավորության տեղադրում

➢ նրբանցքների եւ բակերի հիմնանորոգում, փողոցների եւ մայթերի ասֆալտապատում

➢ հանգստի գոտիների կազմակերպում (այգիներ, շատրվաններ, մարզահրապարակներ)

➢ նախադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնանորոգում, տարածքի բարեկարգում

➢ կոմունալ ծառայությունների սպասարկման սարքավորումների գնում

«ԳեոՊրոՄայնինգ գոլդ» ընկերությունը («ԳեոՊրոՄայնինգ» խմբի մեկ այլ դուստր ձեռնարկություն) մասնակցել է Գեղարքունիքի եւ Արարատի մարզերի սուբվենցիոն ծրագրերին: Միջոցներն ուղղվել են Վարդենիս, Գեղամասար եւ Արարատ խոշորացված համայնքներում ենթակառուցվածքային ծրագրերի իրականացմանը.

➢ ոռոգման եւ խմելու ջրի մատակարարման համակարգի կառուցում

➢ համայնքների գազաֆիկացում

➢ համայնքային փողոցների լուսավորություն

➢ բազմաբնակարան շենքերի տանիքների եւ մուտքերի վերանորոգում

➢ ճանապարհների հիմնանորոգում եւ ասֆալտապատում

➢ մշակույթի տան վերակառուցում, հարակից պուրակի կանաչապատում

➢ Արարատ համայնքի պոլիկլինիկայի կապիտալ վերանորոգում:

Ռոման Խուդոլի. «ԳեոՊրոՄայնինգ» ընկերությունների խմբի նախագահ. «Հայաստանի կառավարության նախաձեռնած սուբվենցիոն քաղաքականությունը պետության, տեղական ինքնակառավարման մարմինների եւ բիզնեսի միջեւ փոխգործակցության լավագույն ձեւաչափերից մեկն է»:

««ԳեոՊրոՄայնինգ»-ը՝ որպես սոցիալապես պատասխանատու ընկերություն, մեծ նշանակություն է տալիս իր ներկայությանը մարզերում՝ սոցիալ-տնտեսական կենսամակարդակի բարելավմանը միտված ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի իրականացմանը: Սոցիալական խնդիրները այն համայնքներում, որտեղ մենք գործում ենք, մշտապես գտնվում են ընկերության ուշադրության կենտրոնում:

Ուստի, երբ ՀՀ կառավարությունն առաջարկեց սուբվենցիոն ծրագրերի գաղափարը՝ մասամբ համընկնելով մեր սոցիալական աջակցության քաղաքականության հետ, «ԳեոՊրոՄայնինգը» ներգրավվեց ակտիվ մասնակցությամբ: Հաշվի առնելով այս ծրագրերի շրջանակներում համագործակցության զգալի փորձը՝ ցանկանում եմ նշել դրանց բարձր արդյունավետությունն ու հասցեականությունը: Ընկերությունը պատրաստ է հետագայում եւս նպաստել տարածաշրջանային զարգացմանը եւ բարելավել իր քաղաքացիների կենսամակարդակը»:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿԻՆԳԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

«Յունիբանկի» ֆինանսավորմամբ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում բացվեց թվային բանկինգի լաբորատորիա: Նորարար լուծումներով լաբորատորիան հնարավորություն կտա կազմակերպելու բանկային գործ մասնագիտությամբ սովորող ուսանողների որակյալ կրթությունը, կնպաստի գիտական եւ մասնագիտական համայնքի՝ համատեղ ջանքերով բանկային համակարգի համար թվային նոր՝ խելացի լուծումներ գեներացնելուն, ինչպես նաեւ՝ երիտասարդ մասնագետների վերապատրաստման մի շարք ծրագրեր իրականացնելուն եւ բանկային ոլորտը մասնագիտական կադրերով համալրելուն:

Լաբորատորիայի բացմանը ՀԱՊՀ ռեկտոր Գոռ Վարդանյանը պոլիտեխնիկական համայնքի անունից շնորհակալություն հայտնեց «Յունիբանկին»՝ ուսումնական կենտրոնը ստեղծելու, համագործակցության, բուհին աջակցելու, ուսանողական ու դասախոսական անձնակազմերին ժամանակակից միջավայրով ապահովելու համար:

«Պոլիտեխնիկը, լինելով տեխնոլոգիական համալսարան, նպատակ ունի բանկի հետ միասին այս լաբորատորիայում իրականացնել նոր մշակումներ, թվային տեխնոլագիաների եւ խելացի լուծումների միջոցով նոր հնարավորություն ստեղծել բանկային գործ մասնագիության, ինչպես նաեւ՝ բանկերի գործունեության մեջ թվային տեխնոլոգիաների ինտեգրման գործում»,- ասաց ռեկտորը:

«Յունիբանկի» Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը նշեց, որ Պոլիտեխնիկական համալսարանի հետ համագործակցությունը, բուհում թվային լաբորատորիայի եւ ուսումնական կենտրոնի ստեղծումը, պատահական չէ, քանզի բանկը, արդեն իսկ, ոչ միայն «տնտեսագիտություն է», այլեւ տեխնոլոգիա: «Ես համոզված եմ, որ այս լաբորատորիան թույլ կտա վերապատրաստման դասընթացներ կազմակերպել ինչպես բարձրագույն կրթություն ունեցող դիմորդների համար, այնպես էլ կիանդիսանա վերապատրաստման վայր, որտեղ նաեւ բանկի գործող աշխատակիցները կկարողանան նոր գիտելիքներ ստանալ՝ ավելացնելով իրենց հմտությունները տեխնոլոգիաների եւ ֆինանսների բնագավառում: Վստահ եմ, որ այս լաբորատորիային սպասում է հաջողություն, բազմաթիվ ուսանողներ եւ նոր դիմորդներ»,- նշեց Մեսրոպ Հակոբյանը:

ՀԱՊՀ ռեկտորը հանդես եկավ առաջարկությամբ, նշելով, որ եթե տեղեկատվական տեխնոլոգիաների եւ ավտոմատացման ամբիոնն ու «Յունիբանկի» մասնագետները՝ միավորելով երիտասարդներին եւ մասնագետներին, գեներացնեն այնպիսի գաղափար, որը հնարավություն կտա բանկային ոլորտում խելացի լուծում մտածել որեւէ խնդիր լուծելու համար, Պոլիտեխնիկական համալսարանը մինչեւ 5 մլն դրամի չափով կֆինանսավորի այդ գաղափարը: Մեսրոպ Հակոբյանն իր հերթին նշեց, որ «Յունիբանկը» եւս իր ներդրումը կունենա այդ նախագծում:

Համագործակցության հուշագիրը, որի շրջանակում իրականացվում են համատեղ մի շարք ծրագրեր, «Յունիբանկի» եւ Պոլիտեխնիկի միջեւ ստորագրվել է անցյալ տարվա դեկտեմբերին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԿԱՅԱՑԱՎ

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՆ ՄԻՐՈՒՆ Է ԶԻՋՈՒՄ»

Ականավոր դիրիժոր Վլադիմիր Ֆեդոսեեւի 90-ամյա հոբելյանի առթիվ երաժիշտը, ու հանրահայտ դաշնակահար Միխայիլ Պլետնյովը, համագործակցելով Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, համատեղ համերգով հանդես եկան Երեւանում: Երեկոն տեղի ունեցավ նոյեմբերի 17-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում:

Վլադիմիր Ֆեդոսեեւն առաջին անգամ չէ Հայաստանում: Տարիներ առաջ որպես զբոսաշրջիկ է այցելել մեր երկիր: Ըստ նրա՝ հայերը շատ բարի են, դրական եւ այդ ամենն ազդում է երաժշտության, ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարողականության վրա: «Պուշկինն ասել է, որ երաժշտությունը միայն սիրուն է զիջում, սակայն սերը եւս երաժշտություն է: Ձեզ մոտ էլ է այդպես. ձեզ մոտ սերն ասես երաժշտություն լինի, դուք սիրով եք ապրում, հարգում եք միմյանց: Ես վաղուց նման բան չեմ տեսել: Ցանկանում եք ամեն բան լավ անել, ինչն իր ազդեցությունն է ունենում երաժշտության վրա: Հոգով հարուստ մարդիկ եք: Մեզ մոտ հարուստները շատ են, սակայն ոչ՝ հոգով»,-նոյեմբերի 16-ին լրագրողների հետ հանդիպմանն ասում է Ֆեդոսեեւը:

Դիրիժորը հավաստիացնում է՝ նվագախումբն իրեն հասկանում է առանց խոսքերի. միայն հետեւելով նրա ձեռքերի շարժումներին՝ ընկալում է ամեն բան: «Դիրիժորը պետք է խոսի ձեռքերով: Ես եւս այդպես եմ վարվում. ղեկավարում եմ առանց դիրիժորական փայտիկի»,-նշում է Վլադիմիր Ֆեդոսեեւը:

Երեւանյան համերգին կհնչեն Չայկովսկու Դաշնամուրի թիվ 1 կոնցերտը եւ Սիմֆոնիա թիվ 5-ը: Չայկովսկու գրած երեք դաշնամուրային կոնցերտներից առաջինն իրավամբ արժանացել է մեծ ճանաչման եւ սիրվել է շնորհիվ երաժշտության քնարական ոգեշնչման, գույների զարմանալի հարստության, իսկ 5-րդ սիմֆոնիան Չայկովսկին գրել է 4-րդ սիմֆոնիայից մոտ տասնմեկ տարի անց: Նրան տանջում էին կասկածները. արդյոք չի՞ սպառվել իր երեւակայությունը, արդյոք դեռ կարո՞ղ է մեծ կտավի սիմֆոնիկ ստեղծագործություններ գրել: 5-րդ սիմֆոնիայով կոմպոզիտորն ապացուցեց իրեն եւ բոլորին, որ իրավամբ հանդիսանում է 19-րդ դարի եւ առհասարակ երաժշտության պատմության մեջ լավագույն սիմֆոնիստներից մեկը: Ամբողջ 5-րդ սիմֆոնիայի ընթացքում երեւում է, թե ինչպես է կոմպոզիտորը, անցնելով կասկածների, հոգեկան տարաձայնությունների եւ զգացմունքների շփոթի միջով, հաղթահարում ներքին պայքարի դժվարին ճանապարհը եւ հասնում տրիումֆալ հաղթանակի:

«Այս ծրագրով Միխայիլ Պլետնյովի հետ հանդես ենք եկել դեռ 1970-ական թվականներին: Նվագել ենք Ճապոնիայում, Վիեննայում եւ հիմա կրկին հանդիպել ենք, թարմացրել ենք մեր հիշողությունները, որոնք կյանք են տալիս: Մի քիչ ծերացել ենք, բայց ծեր չենք»,-նշում է մաեստրոն:

Վլադիմիր Ֆեդոսեեւն ապրում է Մոսկվայում: Ասում է՝ շրջապատված է հայ կոմպոզիտորների հուշարձաններով, եւ շատ է սիրում կատարել Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի եւ այլ հայ հեղինակների գործեր: Նա երբեմն հանդիպում է Արամ Խաչատրյանի հարազատներին ու կարծում է, որ հայերն ու ռուսները շատ ընդհանրություններ ունեն, հոգով իրար մոտ ազգեր են:

Մի առիթով դիրիժորը նշել է, որ ռուս հեղինակների երաժշտությունը դժվարությամբ է տրվում այլ ազգերի երաժիշտներին, սակայն խոստովանում է, որ հայերն այն հեշտությամբ են ըմբռնում: «Յուրաքանչյուր լավ երաժիշտ փայլուն կատարում է ռուս կոմպոզիտորների գործերը, սակայն լսում ու հասկանում ես, որ ինչ-որ բան պակասում է. ասես սրտից չէ, իսկ հայերի դեպքում այդպես չէ, քանի որ հոգեւոր կապ կա, բացատրելու, ներկայացնելու կարիք էլ չկա, ասես մոր կաթի հետ են այդ երաժշտությունն ու երաժշտականությունը ստացել»,-շեշտում է նա:

Վլադիմիր Ֆեդոսեեւը ԽՍՀՄ ժողովրդական արտիստ է, Պ.Ի. Չայկովսկու անվան պետական ակադեմիական մեծ սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը, եղել է նաեւ Վիեննայի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորը, Ցյուրիխի օպերայի մշտական հրավիրյալ դիրիժորը, Տոկիոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի առաջին հրավիրյալ դիրիժորը, Բավարիայի ռադիոյի սիմֆոնիկ (Մյունխեն), Ֆրանսիայի ռադիոյի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբերի (Փարիզ) հրավիրյալ դիրիժորը:

«ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊՐԵՄԻԵՐԱ

Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում դեկտեմբերի 1-ին և 2-ին տեղի կունենա Վաչե Շարաֆյանի «Ձգողականություն» երկու գործողությամբ բալետային ներկայացման պրեմիերան՝ ըստ Լեւոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի:

Բալետը համաշխարհային պրեմիերա է, քանի որ ներկայացման բեմադրությունն ամբողջովին նոր է եւ առաջին անգամ է բեմադրվում:

Բեմադրության երաժշտական ղեկավարը եւ դիրիժորը ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Դուրգարյանն է, լիբրետոյի եւ գեղարվեստական գաղափարի հեղինակն է ՀՀ վաստակավոր արտիստ Նարինե Գրիգորյանը, բեմադրող բալետմայստերն է Արա Ասատուրյանը, բեմադրության եւ զգեստների նկարիչը՝ Վիկտորիա Ռիեդո-Հովհաննիսյանը:

Ներկայացման հիմքում Լեւոն Շանթի «Հին աստվածներ» պիեսն է: Աբեղան փրկում է նավակից ջուրն ընկած աղջկան: Կնոջը գրկած վանականը չի կարողանում մոռանալ թաց մարմինը, ծովի հետ կռիվը, բնության տարերքը... Բնությունը ձգում է նրան: Աբեղան կանգնում է երկընտրանքի առաջ՝ ասկետիկ կյանք, թե՞ լիարժեք կյանքով ապրելու անհագ ցանկություն... Միաբանությունն ուզում է նրան հետ պահել մեղավոր քայլից. «...այն անդամը, որ քեզի կգայթակղեցնե, կտրե ու դուրս նետե քեզմե...»:

Իսկ բնությունը կանչում է... Վանահայրը իր սրտի ցանկությունը խեղդում է մտքի, կամքի ուժով եւ որոշում է քանդել նորաստեղծ եկեղեցին ու շինել նորը... Միտք, թե՞ սիրտ, լույս թե՞ խավար՝ այս ընտրության մեջ մարդը հաճախ ընկնում է ծայրահեղության մեջ՝ չտեսնելով, որ Աստծու ստեղծած բնությունը հենց հակադրությունների միասնությունն է...

ԼՈՒՐԵՐ

ՃՆՇՈՒՄ Է ԳՈՐԾԱԴՐՈՒՄ

«Քաթարի» թագավորական ընտանիքը պահանջել է արգելել գարեջրի վաճառքը նոյեմբերի 20-ին մեկնարկելիք աշխարհի առաջնության 8 ստադիոններում եւ հարակից տարածքներում:

«Քաթարը» ճնշում է գործադրում ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) վրա, որպեսզի այն փոխի քաղաքականությունը գարեջրի վաճառքի նկատմամբ: ՖԻՖԱ-ն խոշոր պայմանագիր ունի գարեջուր արտադրող ընկերության հետ, սակայն կատարել է պահանջը: Միայն Դոհայի ֆան-գոտում օտարերկրացի երկրպագուները հնարավորություն կունենան գնել գարեջուր:

Աշխարհի առաջնության բացումն ու առաջին հանդիպումը տեղի կունենա նոյեմբերի 20-ին: «Քաթար - Էկվադոր» հանդիպումը կմեկնարկի Երեւանի ժամանակով 20:00-ին:

«ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ԿՎԱՃԱՌԻ

«Բարսելոնան» կփորձի հունվարին վաճառել պաշտպան Էկտոր Բելիերինին: Կատալոնական ակումբը նրա ծառայություններն առաջարկել է իտալական «Ռոմային»: Հռոմեական ակումբի պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոն փոխարինող է փնտրում եզրային պաշտպան Ռիկ Կարսդորպին, որի հետ ունի լարված հարաբերություններ:

Իսպանացի ֆուտբոլիստի պայմանագիրը «Բարսելոնայի» հետ նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը: Բելիերինի տրանսֆերային արժեքը գնահատվում է 15 միլիոն եվրո:

ԴԵՌ ՄԱՐԶՎՈՒՄ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ

Իսպանիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր Մադրիդի «Ռեալի» ու աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Կարիմ Բենզեման վնասվածքից հետո դեռ մարզվում է անհատական ծրագրով :

34-ամյա ֆուտբոլիստի մասնակցությունը աշխարհի առաջնության խմբային փուլի առաջին հանդիպմանը հարցականի տակ է: Նոյեմբերի 22-ին Դիդիե Դեշամի գլխավորած թիմը կմրցի Ավստրալիայի հավաքականի հետ:

Խմբային փուլում Ֆրանսիայի հավաքականի մրցակիցները կլինեն նաեւ Դանիայի եւ Թունիսի թիմերը:

● *Նոյեմբերի 20-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա միջոցառում՝ «Սպիտակաձյունիկը եւ յոթ թզուկները»: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ 14:00:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպես ստանալ ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզիա:

Էդգար Մկրտչյան (56 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտատուները Ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 22.12.2005թ. թիվ 2302-Ն որոշմամբ հաստատված հայտը եւ կից փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիցենզիա ստանալու համար տարեկան պետական տուրքը կազմում է 300 000 ՀՀ դրամ: Հայտատուն Ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական գանձապետարանի 900005169058 հաշվեհամարին վճարում է 300 000 ՀՀ դրամ եւ կարող է լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացնել:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է տեղական վճարը

Սեդրակ Հայրապետյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան, տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների համար նույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին համապատասխան՝ տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց նույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Նույն օրենքով սահմանված առանձին դեպքերում տեղական տուրքը կարող է գանձվել պարբերաբար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Նոր ռեկորդ՝ Հայաստանում. Վարդան Պետրոսյանը, միջնամատներով պտտաձողից կախված, 27 անգամ կատարեց հենում-ծալում վարժությունը՝ սահմանելով Հայաստանի եւ աշխարհի ռեկորդ, որը գրանցվեց «Սաքունց համաշխարհային ռեկորդներ» գրքում: Խորհրդանշական է, որ նա վարժությունը կատարեց իր ընկեր NAY 374 -ի «Мир почти потерял любовь» նոր երգի ներքո. սա մարզիկի արդեն 2-րդ ռեկորդն էր: 2021 թվականի Հայաստանի Street Workout -ի առաջնությունում Վարդանը փայլուն հանդես եկավ՝ զբաղեցնելով 2 -րդ տեղը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.11.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: